## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

____________թ. ք.Երևան

«Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ընկերության տնօրեն _____________ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____________ը, (այսուհետ՝ Պատվիրատու), մյուս կողմից, (այսուհետ Կատարողը և Պատվիրատուն միասին կհիշատակվեն նաև՝ որպես «Կողմեր»), հաշվի առնելով, որ.

*- Պատվիրատուին սեփականության իրավունքով պատկանում է ք. Երևան, Աչափնյակ, Վահագնի թաղամաս, _____ փողոց, թիվ ___ հասցեում գտնվող հողամասը/բնակելի տունը (այսուհետ՝ Տուն),*

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել սույն պայմանագրի 1.1.1. և 1.1.2 կետերով նախատեսված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել և վճարել ծառայությունների համար.

**1.1.1.Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները.**

*1.1.1.1. Տան և Վահագնի թաղամասի ընդհանուր օգտագործման կանաչապատ հատվածների ոռոգում և հնձում (խոտհնձիչ մեքենայով):*

*1.1.1.2. Վահագնի թաղամասի ներտեղամասային փողոցների և ընդհանուր օգտագործման տարածքների մաքրում և ձյունամաքրում:*

*1.1.1.3. Վահագնի թաղամասի ներտեղամասային փողոցների գիշերային լուսավորում:*

*1.1.1.4. Կենցաղային աղբի հեռացում (շաբաթական երեք անգամ):*

*1.1.1.5. Վահագնի թաղամասի հեղեղատարների սպասարկման և խցանումների մաքրման աշխատանքներ:*

*1.1.1.6. Վահագնի թաղամասի կենսագործունեության ապահովման նպատակով գոյություն ունեցող կոմունիկացիաների սպասարկում:*

*1.1.1.7. Վահագնի թաղամասի ընդհանուր օգտագործման մուտքերի հսկողություն և Վահագնի թաղամասում գործող համակեցության կանոնների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով շրջիկ խմբի շրջայց թաղամասում:*

**1.1.2. Սույն պայմանագրով Կատարողը իրականացնում է.**

*1.1.2.1. Պատվիրատուի կողմից սպառված էլեկտրաէներգիայի վճարի (այդ թվում՝ բարձր լարման փոխարկում, ներքին ցանցի սպասարկում, շահագործում) փոխհատուցման հավաքագրում:*

*1.1.2.2. Պատվիրատուի կողմից սպառված ջրամատակարարման և ջրահեռացման վճարրի փոխհատուցման հավաքագրում:*

1.2. Սույն պայմանագրի 1.1. կետով նախատեսված ծառայութունները Կատարողի կողմից մատուցվելու են Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված իր վճարման և (կամ) փոխհատուցման բոլոր պարտավորությունները պատշաճ կարգով կատարվելու դեպքում:

### 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

***2.1. Կատարողն իրավունք ունի.***

2.1.1. Պատվիրատուից պահանջելու կատարելու սույն պայմանագրի 3.1. կետով նախատեսված բոլոր վճարումները:

2.1.2. Պատվիրատուի կողմից համապատասխան վճարումները ժամանակին չկատարելու դեպքում դադարեցնել սույն պայմանագրով նախատեսված բոլոր տեսակի ծառայությունների մատուցումը:

2.1.3. Պատվիրատուին նախապես տեղյակ պահելով մուտք գործել վերջինիս տուն և ստուգել հաշվիչների ցուցմունքները:

## SERVICE AGREEMENT

_________ Yerevan

“Hovnanian International” LTD (hereinafter referred to as "the Contractor"), represented by Director ________ acting on the basis of the Charter of the Company, from one side and _______, (hereinafter referred to as The Client), from other side, (hereinafter the Contractor and the Client collectively referred to as " the Parties"), having regard that:

*-The client holds the rights of property of the land/ house (hereafter-the house), located in Yerevan, Achapnyak district, Vahakni Residential community, ______street, N___,*

concluded this Agreement on the following:

### 1. Subject of Agreement

1.1 Under this Agreement, the Contractor shall be obliged to provide the services envisaged by Clauses 1.1.1. and 1.1.2 of this Agreement as assigned by the Client, and the Client shall be obliged to accept and pay for the services.

**1.1.1. Under this Agreement, the Contractor shall be obliged to provide the following services:**

*1.1.1.1. The watering and mowing of the common use areas of Vahakni residential community and the house.*

*1.1.1.2. The cleaning and snow removal of the common use areas and internal streets of Vahakni residential community.*

*1.1.1.3. The street lighting of Vahakni residential community.*

*1.1.1.4. Garbage removal (3 times per week).*

*1.1.1.5. Maintenance and cleaning of storm drainage pipes.*

*1.1.1.6. Maintenance and services of existing utilities infrastructure.*

*1.1.1.7. Control of the entrances of the community and monitoring of rules of the peaceful coexistence of the community by the patrol of guards.*

**1.1.2. Under this Agreement, the Contractor provides.**

*1.1.2.1. Collecting of reimbursement for electricity, including high voltage conversion, internal network maintenance consumed by the Client.*

*1.1.2.2. Collecting of reimbursement for water supply and sewage consumed by the Client.*

1.2 The services provided in paragraph 1.1 of this agreement will be provided by the Contractor if Customer properly fulfills all of its payment and (or) reimbursement obligations under this agreement.

### 2. Rights and Obligations of Parties

***2.1. The Contractor shall have the right to:***

2.1.1. Require that the Client execute all the payments provided for by Clause 3.1. of this Agreement.

2.1.2. Terminate the provision of all types of services under this Agreement where the Client fails to make the timely appropriate payments.

2.1.3. Giving a prior notice to the Client, visit the latter at home and read the meters.

2.1.4. Ինքնուրույն որոշել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման եղանակները:
2.1.5. Անհրաժեշտության դեպքում իր պարտավորությունների կատարմանը մասնակից դարձնել այլ անձանց:
2.1.6. Իր կողմից օգտագործվող նյութերի և սարքավորումների, ինչպես նաեւ երրորդ անձանց կողմից իրեն մատուցվող ծառայությունների արժեքի էական բարձրացման դեպքում, որը հնարավոր չէր կանխատեսել սույն պայմանագիրը կնքելիս՝ իրավունք ունի պահանջել ավելացնելու պայմանագրի գինը:
2.1.7 Միակողմանիորեն ժամանակ առ ժամանակ նորացնել սույն պայմանագրի հիմնական պայմանները՝ ելնելով տեխնոլոգիական առաջընթացից և փոփոխություններից:
***2.2. Կատարողն իրավունք չունի.***
2.2.1. Հրաժարվել սույն պայմանագրի առարկայով նախատեսված ծառայությունների մատուցումից՝ բացառությամբ սույն պայմանագրով նախատեսված դեպքերի:
***2.3. Կատարողը պարտավոր է.***
2.3.1. Ապահովել սույն պայմանագրի 1.1. կետով նախատեսված բոլոր ծառայությունների ամբողջական, որակով և ժամանակին կատարումը:
2.3.2. Ծառայությունները մատուցել իր ուժերով, նյութերով և միջոցներով:
2.3.3. Ժամանակին վերացնելու սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ընթացքում առաջացած թերությունները:
***2.4. Պատվիրատուն իրավունք ունի.***
2.4.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կատարած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:
***2.5. Պատվիրատուն իրավունք չունի.***
2.5.1. Միակողմանիորեն լուծելու սույն պայմանագիրը կամ հրաժարվելու տրամադրված աշխատանքների դիմաց վճարելուց, եթե դա հետևանք չէ սույն պայմանագրի պայմանների կոպիտ խախտման:
***2.6. Պատվիրատուն պարտավոր է.***
2.6.1. Մատուցված ծառայությունների համար վճարել սույն պայմանագրում նշված ժամկետներում և կարգով, ինչպես նաև անմիջապես վավերացնել 2.1.7 կետով նախատեսված՝ Կատարողի կողմից ներկայացված պայմանագրի փոփոխությունները:
Կողմերը ունեն նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

2.1.4. Decide independently the methods of the provision of services under this Agreement.
2.1.5. Involve other parties in the fulfillment of the obligations thereof where necessary.
2.1.6. Require that the price of the Agreement be increased in case of a significant increase of the cost of the materials and equipment used thereby, as well as the cost of the services provided thereto by third parties, which was not possible to foresee at the time of signing the Agreement.
2.1.7. Have the unilateral right from time to time to update this agreement to take in technological advancements and changing general conditions.
***2.2. The Contractor shall not have the right to:***
2.2.1. Refuse to provide the services envisaged by the subject of this Agreement with the exception of cases provided by this contract.
***2.3. The Contractor shall be obliged to:***
2.3.1. Ensure complete, quality and timely performance of all the services envisaged by Clause 1.1. of this Agreement.
2.3.2. Provide the services with its own resources, materials and means thereof.
2.3.3. Timely eliminate the defects which appeared during provision of the services under this Agreement.
***2.4. The Client shall have the right to:***
2.4.1 Check at any time the process and quality of the work provided by the Contractor without interfering within the activities of the latter.
***2.5. The Client shall not have the right to:***
2.5.1. Unilaterally terminate this Agreement or refuse to pay for the works provided where this does not result from the violation of the conditions of this Agreement.
***2.6. The Client shall be obliged to:***
2.6.1. Make timely payments for the services provided according to the terms and manner defined in this Agreement and endorses updated Agreements referred to in 2.1.7 herein promptly when presented by Contractor.
The Parties shall also have other rights and obligations provided for by the legislation of the Republic of Armenia.

## 3. Պայմանագրի գինը և վճարման եղանակները

3.1. Սույն պայմանագրի առարկայով նախատեսված ծառայությունների գինը կազմում է.
3.1.1. Սույն պայմանագրի 1.1.1. կետով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին վճարել ամսական ___________________ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:
3.1.2. Սույն պայմանագրի 1.1.2. կետով նախատեսված վճարումների համար Պատվիրատուն պարտավորվում է կատարողին փոխհատուցել՝ ըստ ներկայացված հաշիվ-ապրանքագրի:
3.1.3. 3-ից ավել յուրաքանչյուր սանհանգույցի համար ամսական __________ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:
3.1.4. 1-ից ավել յուրաքանչյուր խոհանոցի (ներառյալ ամառային) համար ամսական _________ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:
3.2. Սույն պայմանագրով նախատեսված բոլոր վճարումները կատարվում են ըստ ներկայացված հաշիվ-ապրանքագրի:
3.3. Վճարումները կատարվում են հաշիվ-ապրանքագրում նշված ժամկետում:
3.4. Կատարողը կարող է փոխհատուցվել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների կատարման հետ ուղղակիորեն առնչվող այլ խելամիտ և անհրաժեշտ ծախսերի դիմաց:

## 3. Price and Payment Procedure of the Agreement

3.1. The price of the services envisaged by the subject of this Agreement shall constitute as follows:
3.1.1. For the provision of services envisaged by Clause 1.1.1. of this Agreement, the Client shall be obliged to pay the Contractor monthly _______________ AMD, including VAT.
3.1.2. For the payments envisaged by Clause 1.1.2. of this Agreement, the Client shall be obliged to reimburse the Contractor, according to the submitted invoice.
3.1.3. For each bathroom exceeding three - monthly AMD ___________ including value added tax.
3.1.4. For each kitchen exceeding one (including summer kitchen) - monthly AMD ____________ including VAT.
3.2. All the payments under this Agreement shall be executed in accordance with the invoices submitted.
3.3. The payments shall be executed within the terms specified in the invoices.
3.4. The Contractor shall be reimbursed for other reasonable and appropriate expenditures directly related with the provision of the services under this Agreement.

## 4. Սպասարկման պայմաններ:

4.1. Սույնով Պատվիրատուն հաստատում է, որ վերը նշված ծառայությունները մատուցվում են Կատարողի հետ կնքված սույն սպասարկման պայմանագրի և «Սահմանափակումներ» փաստաթղթի համաձայն, դրանք հանդիսանում են «Սահմանափակումներ» փաստաթղթի ամենավերջին տարբերակի անբաժանելի մասը և կարգավորվում են նշված փաստաթղթերով:
Նշված ամփոփ փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ստորև նշված հղումով` www.vahakni.com:
4.2. Սույն սպասարկման պայմանագիրը նախատեսված է անվտանգության, ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման, հեռահաղորդակցության, աղբահանության, փողոցների մաքրման, լանդշաֆտի խնամքի, մասնավոր սեփականություն հանդիսացող ճանապարհների և փողոցների պայմանական օգտագործման և այլ հարակից ծառայությունների համար, որոնք նկարագրված չեն այստեղ: Այս պայմանագրում նշված և Կատարողի կողմից մատուցված ծառայություններից օգտվելը հաստատում է Պատվիրատուի համաձայնությունը վերը նշված համաձայնագրերի/փաստաթղթերի հետ, որոնց հետ կարելի է ծանոթանալ և ներբեռնել Կատարողի պաշտոնական ինտերնետային կայքից (www.vahakni.com): Ծառայությունների անխափան մատուցման համար անհրաժեշտ է ժամանակին կատարել վճարումները:
4.3. Պատվիրատուն նաև ընդունում է, որ Կատարողի սարքավորումների վնասումը և (կամ) մանիպուլյացիան անօրինական է և կարող է պատժվել օրենքով սահմանված կարգով: Պատվիրատուն նաև ճանաչում է իր տարածքում Կատարողին պատկանող և նրա կողմից տեղակայված սարքավորումներին հասանելիություն ունենալու ընկերության իրավունքը` որպես վերը նշված սահմանափակումների համաձայն սույն փաստաթղթում նկարագրված բոլոր ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պահանջ:

## 4. Terms Of Service:

4.1. Client hereby acknowledges that the service provided in connection to this agreement is pursuant to the Service agreement and Restrictions document signed with Contractor and are part and parcel to and subject to the most current Restrictions document.
These collective documents can be found at the website provided below - www.vahakni.com.
4.2. This Service agreement is for security, water, sewer, gas, electric, telecommunications, garbage removal, street cleaning, landscape maintenance, conditional use of the privately owned roads and streets and other associated services not outlined here. The use of the services provided by Contractor in this agreement acknowledges the Client's acceptance of these agreements described above can be viewed and downloaded from the Contractor website www.vahakni.com. Prompt payment must be received in order for service to be uninterrupted.
4.3. The Client further acknowledges that damaging and or tampering with any Contractor equipment is illegal and can be punishable by law. Client also acknowledges Contractor's right to access to its equipment placed on resident's property as a requirement to provision of all services described herein as outlined by the Restrictions agreement referred to above.

## 5. Ծանուցում

5.1. Սույն Պայմանագրի 1.1. կետով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց վճարումների համար Կատարողը կարող է Պատվիրատուին ծանուցել էլեկտրոնային եղանակով` էլ. փոստի, SMS հաղորդագրության կամ Messenger հավելվածի միջոցով: Ցանկացած այլ եղանակով ծանուցման դեպքի համար Պատվիրատուից կգանձվի լրացուցիչ վճար:
5.2. Պատվիրատուի կողմից ծանուցման ստացման համար տրամադրված տվյալների փոփոխման դեպքում վերջինս պարտավոր է Կատարողին տրամադրել նոր տվյալներ: Պատվիրատուի կողմից Կատարողին նոր տվյալների չտրամադրման դեպքում` նախկինում տրամադրված տվյալների վրա ծանուցումների ուղարկումը կհամարվի, որ Պատվիրատուն պատշաճ կարգով ծանուցված է:

## 5. Notification

5.1. The Contractor may notify the Client on the payments for the services envisaged by Clause 1.1. of this Agreement electronically by email, sms or messenger application. Any other type of delivery will be at an additional charge to Client.
5.2. Where the data submitted for the receipt of the notification is changed by the Client the latter shall be obliged to provide the Contractor with new data. Where the Client fails to provide the Contractor with new data, the Client shall be deemed to be duly notified by the notifications based on previously provided data.

## 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված վճարումների ժամկետները խախտելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջելու վճարելու տույժ` վճարման ենթակա գումարի 0.055% տոկոսի չափով` կետանցի յուրաքանչյուր օրվա համար:
6.2. Տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց վրա դրված պարտավորությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

## 6. Liability of Parties

6.1. Where the payment terms under this Agreement are violated the Contractor shall have the right to require the Client pay a penalty in the amount of 0.055% of the payable sum for each day of delay.
6.2. Payment of penalties shall not exempt the Parties from fulfilling the obligations thereof or eliminating the violations.

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար` ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, բացառությամբ եթե դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատճառ են հանդիսացել համընդհանուր կերպով ընդունելի ֆորս-մաժորային

## 7. Force Majeure

7.1. The Parties shall be liable for the proper fulfillment of the obligations thereof under this Agreement in accordance with the laws and other legal acts of the Republic of Armenia except where the failure to fulfill or improper fulfillment of these obligations result from generally accepted force majeure circumstances, which directly hinder the ability of the

| | |
|---|---|
| հանգամանքները, որոնք ուղղակիորեն խոչնդոտում են Կատարողին իր աշխատանքը կատարելու ունակության վրա և չէին կարող վերացվել կամ կառավարվել վերջինիս կողմից:<br>7.2. Եթե սույն պայմանագրի 7.1. կետում նշված հանգամանքները կրում են ժամանակավոր բնույթ, ապա կողմերը պարտականությունների կատարումից ազատվում են միայն այդպիսի հանգամանքների և դրանց հետևանքների գործողության ընթացքում՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:<br><br>**8. Վեճերի լուծման կարգը**<br><br>8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:<br><br>**9. Եզրափակիչ դրույթներ**<br><br>9.1. Պատվիրատուն սույնով աներկբայորեն ընդունում է, որ սույն պայմանագրի հիման վրա մատուցված ծառայությունների արդյունքում Տան գծով ձևավորված բոլոր ֆինանսական պարտավորությունները (սպասարկման ծառայությունների և փոխհատուցման ենթակա գումարների գծով) ենթակա են իր կողմից պարտադիր կատարման՝ անկախ դրանց ծագման ժամանակահատվածից:<br>9.2. Սույն պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:<br>9.3. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում _________թ.-ից:<br>9.4. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, հայերեն և անգլերեն լեզուներով, սակայն պայմանագրի մեկնաբանության վերաբերյալ տարակարծությունների դեպքում՝ նախապատվությունը տրվում է անգլերեն տարբերակին:<br><br>**10. Կողմերի վավերապայմանները, ծանուցման հասցեները և ստորագրությունները** | Contractor to perform the activities thereof and could not have been foreseen or controlled by the latter.<br>7.2. Where the circumstances specified in Clause 7.1. have temporary nature the Parties shall be released from the fulfillment of obligations solely with the effective period of these circumstances and the consequences thereof in accordance with the legislation of the Republic of Armenia.<br><br>**8. Dispute Settlement Procedure**<br><br>8.1. The disputes arising from this Agreement shall be settled through negotiations. In case of failure to reach an agreement the disputes shall be settled by judicial procedure in accordance with the legislation of the Republic of Armenia.<br><br>**9. Final Provisions**<br><br>9.1. The Client hereby unconditionally accepts that all financial obligations for the House created as a result of the provision of services according to this agreement (for the provision of services and amounts subject to reimbursement) are subject to mandatory execution by him, regardless of the period of their origin.<br>9.2. This Agreement shall be deemed concluded for an indefinite term.<br>9.3. This Contract shall enter into force on _________.<br>9.4. This Agreement is composed in two equal copies in Armenian and English, however, in case of disagreements with regard to the interpretation of the provisions of the Agreement the English version shall prevail.<br><br>**10. Requisites, notification Addresses and Signatures of Parties** |
| **Կատարող**<br>______________<br><br>_____________________________________ | **The Contractor**<br>_______________<br><br>___________________________________ |
| **Պատվիրատու**<br>______________<br><br>_____________________________________<br><br>ծանուցման փոստային հասցե՝________________________<br>________________________ հեռ. Ֆաքս<br>________________________ email | **The Client**<br>__________________<br><br>___________________________________<br><br>Notification mail address: ________________________<br>________________________ Tel./Fax<br>________________________ email |